ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
22 դեկտեմբերի 2016 թվականի N 126-Ա

«ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ԱՄԱՆՈՐ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի «բ» ենթակետի և 1.19 կետի «ա» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածի N1 աղյուսակի 08 բաժնի 02 խմբի 01 դասի 04 «Մշակութային միջոցառումների իրականացում» ծախսային ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համար նախատեսված ծախսերի «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին» հոդվածը,

ո ր ո շ ու մ ե մ՝

1. «Սյունիքյան Ամանոր» միջոցառում կազմակերպելու նպատակով 6,371,700 (վեց միլիոն երեք հարյուր յոթանասունմեկ հազար յոթ հարյուր) դրամ տրամադրել Սյունիքի մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, նրա հետ կնքելով հանձնարարության պայմանագիր:
2. Հաստատել «Սյունիքյան Ամանոր» միջոցառման կազմակերպման և անցկացման կազմակերպական կոմիտեի կազմը, անցկացման ծրագիրը, կանոնադրությունը, ծախսերի նախահաշիվը և ժամանակացույցը՝ համաձայն N 1 – 5-րդ հավելվածների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2016թ. դեկտեմբերի 22
ք. Կապան